

Այց Սյունիքի մարզ

Հոկտեմբերի 10-ին Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեններ Հասմիկ Ղազարյանը, Ռազմիկ Առաքելյանը և Միջոցառումների կազմակերպման բաժնի վարիչ Անահիտ Մանուչարյանը այցելեցին Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջան: Գորիսի քաղաքային և Վերիշենի համայնքային գրադարաններին Ազգային գրադարանի գրքափոխանակության հավաքածուից նվիրաբերվեց 123 միավոր գրականություն:

Սյունիքի մարզի Կաղնուտ, Ուժանիս և Տեղ համայնքներին նվիրաբերվեց 2015թ. «Դարձիր գրադարանի բարեկամ» ծրագրի շրջանակներում կազմակերպված գրքահավաքի գրականությունը: